ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N <<ՎՀ-ՄԱ-ԱՊՁԲ-21/03/04>>

Ք. Վայք «31» մարտի 2021թ.

Վայքի համայնքապետարանը ի դեմս համայնքի ղեկավար Թ. Ավետյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և <<Արման և Վահե Կոստանյաններ>> ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Վահե Կոստանյանի, որը գործում է <<Արման և Վահե Կոստանյաններ>> ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 7 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի թարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով,

ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 7 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 390000 (երեք հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 1 օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[20] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Վայքի համայնքապետարան	<<Արման և Վահե Կոստանյաններ>> ՍՊԸ
Բանկը՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչ.	ՀՀ ՎՁՄ ք. Վայք Շահումյան 1/1
Հ/Հ 900342121028	«Ակբա Բանկ» ԲԲԸ
ՀՎՀՀ 08913477	h/h 220023330511000
Համայնքի ղեկավար	ՀՎ/ՀՀ 09104376
Թ. Ավետյան	Տնօրեն Վ. Կոստանյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված
«31» մարտի 2021թ. կնքված
<<ՀՀ-ՄԱ-ԱՊՁԲ-21/03/03>> ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի								մատակարարման		
Չափ/հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	Հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը***
1	39224331	դույլ պլաստմասե	դույլ պլաստմասե, առնվազն 10-15 լ ծավալով , լավ որակի, բռնակով	հատ	1450	21750	15	ՀՀ Վայոց Ձոր մարզ ք.Վայք Շահումյան 18	15	պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից ըստ պատվիրատուի պահանջի,ոչ պակաս քան քսան օրացույցային օր
2	39224332	դույլ ցինկապատ	դույլ ցինկապատ, առնվազն 10-15 լ ծավալով , լավ որակի, բռնակով	հատ	2450	12250	5	ՀՀ Վայոց Ձոր մարզ ք.Վայք Շահումյան 18	5	պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից ըստ պատվիրատուի պահանջի,ոչ պակաս քան քսան օրացույցային օր
3	39224341	աղբարկղ, պլաստմասե	աղբարկղ, պլաստմասե, առնվազն 10-15լ ծավալով	հատ	1450	21750	15	ՀՀ Վայոց Ձոր մարզ ք.Վայք Շահումյան 18	15	պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից ըստ պատվիրատուի պահանջի,ոչ

										պակաս քան քսան օրացույցային օր
4	39839100	գոգաթիակ, աղբը հավաքելու համար ձողով	գոգաթիակ, աղբը հավաքելու համար ձողով,պլաստմասե	հատ	1000	16000	16	ՀՀ Վայոց Ձոր մարզ ք.Վայք Շահումյան 18	16	պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից ըստ պատվիրատուի պահանջի,ոչ պակաս քան քսան օրացույցային օր
5	39839200	գոգաթիակ աղբը հավաքելու համար, հասարակ	գոգաթիակ աղբը հավաքելու համար, հասարակ, պլաստմասե	հատ	500	10000	20	ՀՀ Վայոց Ձոր մարզ ք.Վայք Շահումյան 18	20	պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից ըստ պատվիրատուի պահանջի,ոչ պակաս քան քսան օրացույցային օր
6	39836000	ավել սովորական	ավել սովորական Սենյակի հատակը մաքրելու համար, բնական, տեղական կամ համարժեք արտադրության, քաշը չոր վիճակում ոչ պակաս 800 գրամ, երկարությունը ոչ պակաս 85 սմ, ավլող մասի լայնքը ոչ պակաս 35 սմ	հատ	1000	30000	30	ՀՀ Վայոց Ձոր մարզ ք.Վայք Շահումյան 18	30	պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից ըստ պատվիրատուի պահանջի,ոչ պակաս քան քսան օրացույցային օր
7	39221410	ավել բակային	ավել բակային Սենյակի հատակը մաքրելու համար, բնական, տեղական կամ համարժեք արտադրության, քաշը չոր վիճակում ոչ պակաս 800 գրամ, երկարությունը ոչ պակաս 85 սմ, ավլող մասի լայնքը ոչ պակաս 35	հատ	800	8000	10	ՀՀ Վայոց Ձոր մարզ ք.Վայք Շահումյան 18	10	պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից ըստ պատվիրատուի պահանջի,ոչ պակաս քան քսան

			սմ							օրացույցային օր
8	39835000	հատակ մաքրելու ձող	հատակ մաքրելու ձող , փայտյա	հատ	1460	14600	10	ՀՀ Վայոց Ձոր մարզ ք.Վայք Շահումյան 18	10	պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից ըստ պատվիրատուի պահանջի,ոչ պակաս քան քսան օրացույցային օր
9	44411500	ջրի փական բրոնզե 1/2	ջրի փական բրոնզե համաձուլվածքից պատրաստված, դիմացկուն կտրուկ եղանակային փոփոխություններին, պայկայի խողովակի համար չափը՝ ½ գնդիկավոր	հատ	1450	8700	6	ՀՀ Վայոց Ձոր մարզ ք.Վայք Շահումյան 18	6	պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից ըստ պատվիրատուի պահանջի,ոչ պակաս քան քսան օրացույցային օր
10	44411500	ջրի փական բրոնզե 3/4	ջրի փական բրոնզե համաձուլվածքից պատրաստված, դիմացկուն կտրուկ եղանակային փոփոխություններին,պայկայի խողովակի համար չափը՝ ¾ գնդիկավոր	հատ	1550	9300	6	ՀՀ Վայոց Ձոր մարզ ք.Վայք Շահումյան 18	6	պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից ըստ պատվիրատուի պահանջի,ոչ պակաս քան քսան օրացույցային օր
11	31521200	լամպ՝ էկոնոմ 15 վտ, 80 մմ, E27, 220 Վ	լամպ՝ էկոնոմ 15 վտ, 80 մմ, E27, 220 Վ	հատ	950	24700	26	ՀՀ Վայոց Ձոր մարզ ք.Վայք Շահումյան 18	26	պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից ըստ պատվիրատուի պահանջի,ոչ պակաս քան քսան օրացույցային

										օր
12	31521300	Լամպ գնդաձև շիկացման թելիկով	Լամպ գնդաձև շիկացման թելիկով E27, 220 Վ	հատ	100	3900	39	ՀՀ Վայոց Ձոր մարզ ք.Վայք Շահումյան 18	39	պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից ըստ պատվիրատուի պահանջի,ոչ պակաս քան քսան օրացույցային օր
13	31531100	լամպ ԼԵԴ	լամպ ԼԵԴ, 15 վտ E27, 220 Վ , միջին	հատ	1000	30000	30	ՀՀ Վայոց Ձոր մարզ ք.Վայք Շահումյան 18	30	պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից ըստ պատվիրատուի պահանջի,ոչ պակաս քան քսան օրացույցային օր
14	31221180	լամպերի կոթառներ	լամպերի կոթառներ E27, կերամիկական սպիտակ	հատ	150	6000	40	ՀՀ Վայոց Ձոր մարզ ք.Վայք Շահումյան 18	40	պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից ըստ պատվիրատուի պահանջի,ոչ պակաս քան քսան օրացույցային օր
15	31211180	վթրային ավտոմատ անջատիչ միաֆազ	վթրային ավտոմատ անջատիչ միաֆազ	հատ	2000	20000	10	ՀՀ Վայոց Ձոր մարզ ք.Վայք Շահումյան 18	10	պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից ըստ պատվիրատուի պահանջի,ոչ պակաս քան քսան օրացույցային օր
16	44423600	կպչուն ժապավեն	Կպչուն ժապավեն ոչ թափանցիկ	հատ	200	3800	19	ՀՀ Վայոց	19	պայմանագրի

			պոլիէթիլենային (Իզալացիոն լենթ) միջին չափի ,բարձր կորոզիոն դիմադրությամբ, էլեկտրական լարերը մեկուսացնելու համար					Ձոր մարզ բ.Վայք Շահումյան 18		ուժի մեջ մտնելու օրվանից ըստ պատվիրատուի պահանջի,ոչ պակաս քան քսան օրացույցային օր
17	31684400	վարդակ	վարդակ , էլեկտրական, սպիտակ գույնի, մեկ տեղանոց 220 Վ	հատ	450	9000	20	ՀՀ Վայոց Ձոր մարզ բ.Վայք Շահումյան 18	20	պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից ըստ պատվիրատուի պահանջի,ոչ պակաս քան քսան օրացույցային օր
18	44411110	ջրի ծորակ մեկ փականով	ջրի ծորակ մեկ փականով, նիկելապատ, 1 լրակազմ,միացումներով, միջին չափի	հատ	4950	24750	5	ՀՀ Վայոց Ձոր մարզ բ.Վայք Շահումյան 18	5	պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից ըստ պատվիրատուի պահանջի,ոչ պակաս քան քսան օրացույցային օր
19	44411742	զուգարանակոնքի մեխանիզմ	զուգարանակոնքի մեխանիզմ,կողքից միացումով	հատ	3800	7600	2	ՀՀ Վայոց Ձոր մարզ բ.Վայք Շահումյան 18	2	պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից ըստ պատվիրատուի պահանջի,ոչ պակաս քան քսան օրացույցային օր
20	44411760	զուգարանի թղթի բռնակ	զուգարանի թղթի բռնակ, մետաղյա նիկելապատ	հատ	1500	3000	2	ՀՀ Վայոց Ձոր մարզ բ.Վայք	2	պայմանագրի ուժի մեջ մտնելու

								Շահումյան 18		օրվանից ըստ պատվիրատուի պահանջի,ոչ պակաս քան քսան օրացույցային օր
21	44511700	հարթաշուրթ	հարթաշուրթ չափսը 7/180 մմ, մեկուսիչ բռնակներով, չժանգոտող մետաղից	հատ	2250	9000	4	ՀՀ Վայոց Ձոր մարզ ք.Վայք Շահումյան 18	4	պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից ըստ պատվիրատուի պահանջի,ոչ պակաս քան քսան օրացույցային օր
22	44511250	սեղմիչ աքցան	սեղմիչ աքցան, չափսը 7/180 մմ, մեկուսիչ բռնակներով, չժանգոտող մետաղից	հատ	2500	5000	2	ՀՀ Վայոց Ձոր մարզ ք.Վայք Շահումյան 18	2	պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից ըստ պատվիրատուի պահանջի,ոչ պակաս քան քսան օրացույցային օր
23	44511370	գործիքների հավաքածու	Գործիքների հավաքածո, առնվազն 30 մասերից բաղկացած Քաշը՝ առնվազն 2,65 կգ, արկղիկի չափը՝ առնվազն 36,5 x 22 x 60 սմ, առկա տեսակները հարթաշուրթ 2((սուր, ուղիղ), պտուտակահան 2, կարգավորվող մանեկադարձիչ 1, մուրճ 1, մետր , ռեզակ ,պտուտակահանի գլխիկներ	հատ	14500	14500	1	ՀՀ Վայոց Ձոր մարզ ք.Վայք Շահումյան 18	1	պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից ըստ պատվիրատուի պահանջի,ոչ պակաս քան քսան օրացույցային օր
24	44521121	դռան փականի միջուկ	դռան փականի միջուկ,միջին չափի, բանալիով փակվող	հատ	2000	20000	10	ՀՀ Վայոց Ձոր մարզ ք.Վայք Շահումյան 18	10	պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից ըստ պատվիրատուի

										ի պահանջի,ոչ պակաս քան քսան օրացույցային օր
25	39221420/1	խոզանակ հատակի ձողով	խոզանակ հատակի ձողով, չափսը՝ 1.5 մ, պլաստմասե, 3սմ	հատ	1900	3800	2	ՀՀ Վայոց Ձոր մարզ ք.Վայք Շահումյան 18	2	պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից ըստ պատվիրատուի պահանջի,ոչ պակաս քան քսան օրացույցային օր
26	39221420/2	խոզանակ հատակի սովորական	խոզանակ հատակի սովորական, պլաստմասե , բռնակով, խավի երկարությունը 3սմ	հատ	1000	2000	2	ՀՀ Վայոց Ձոր մարզ ք.Վայք Շահումյան 18	2	պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից ըստ պատվիրատուի պահանջի,ոչ պակաս քան քսան օրացույցային օր
27	44511110/1	բահ սուր	բահ սուր, այգեգործական, չափսերը լայնությունը ոչ պակաս 210 մմ, առանց ձող, քաշը ոչ պակաս 0,88 կգ, կոթի տրամագիծը ոչ պակաս 30 մմ սուր լավ որակի	հատ	2400	4800	2	ՀՀ Վայոց Ձոր մարզ ք.Վայք Շահումյան 18	2	պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից ըստ պատվիրատուի պահանջի,ոչ պակաս քան քսան օրացույցային օր
28	44511110/2	բահ զոգավոր	բահ զոգավոր,թիակավոր , այգեգործական, չափսերը ոչ պակաս լայնությունը ոչ պակաս 230 մմ, առանց ձող, քաշը ոչ պակաս 0,95 կգ, կոթի տրամագիծը ոչ պակաս 30 մմ սուր լավ որակի	հատ	2400	4800	2	ՀՀ Վայոց Ձոր մարզ ք.Վայք Շահումյան 18	2	պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից ըստ պատվիրատուի պահանջի,ոչ պակաս քան

										քսան օրացույցային օր
29	44511330	պտուտակահան	պտուտակահան,ձեռքի, բազմաֆունկցիոնալ,ընդհանուր երկարությունը 25 սմ	հատ	1500	3000	2	ՀՀ Վայոց Ձոր մարզ ք.Վայք Շահումյան 18	2	պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից ըստ պատվիրատուի պահանջի,ոչ պակաս քան քսան օրացույցային օր
30	44423220	աստիճան ծալվող	աստիճան ծալվող :Հարթ փակվող համակարգ: Հարթակի բարձրությունառնվազն՝ 133 սմ: Աշխատանքային բարձրություն առնվազն՝ 313 սմ: Առավելագույն քաշ (դիմացկունություն)՝ 150 կգ: Աստիճանի քաշ՝ 7կգ:Մետաղական:	հատ	14500	14500	1	ՀՀ Վայոց Ձոր մարզ ք.Վայք Շահումյան 18	1	պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից ըստ պատվիրատուի պահանջի,ոչ պակաս քան քսան օրացույցային օր
31	44511170	փոցխ այգեգործական	փոցխ այգեգործական,ատամների քանակը ոչ պակաս 12մմ, ատամների բարձրությունը ոչ պակաս 7,2մմ ընդհանուր բարձրությունը ոչ պակաս 8,6 մմ, երկարությունը ընդհանուր ոչ պակաս 312 մմ, կոթի տրամագիծը ոչ պակաս 30 մմ	հատ	2000	6000	3	ՀՀ Վայոց Ձոր մարզ ք.Վայք Շահումյան 18	3	պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից ըստ պատվիրատուի պահանջի,ոչ պակաս քան քսան օրացույցային օր
32	44511390	բահի բռնակ (պոչ)	Փայտից բռնակ , առնվազն 1,5 մ երկարությամբ փայտյա,տրամագիծը 4-5 սմ կամ ստանդարտ, չոր, առանց ոստերի (բահի կոթ)	հատ	1000	7000	7	ՀՀ Վայոց Ձոր մարզ ք.Վայք Շահումյան 18	7	պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից ըստ պատվիրատուի պահանջի,ոչ պակաս քան քսան օրացույցային

										օր
33	18141100	աշխատանքային ձեռնոցներ	Բանվորական աշխատանքներ կատարելու համար ,բարձր որակի ափի ներսի մակերևույթը լատեքսապատ, մատերը լատեքսապատ	հատ	350	10500	30	ՀՀ Վայոց Ձոր մարզ ք.Վայք Շահումյան 18	30	պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից ըստ պատվիրատուի պահանջի,ոչ պակաս քան քսան օրացույցային օր

ԳՆՈՐԴ
Վայքի համայնքապետարան
Բանկը՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչ.
Հ/Հ 900342121028
ՀՎՀՀ 08913477
Համայնքի ղեկավար
Թ. Ավետյան
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
<<Արման և Վահե Կոստանյաններ>> ՍՊԸ
ՀՀ ՎՁՄ ք. Վայք Շահումյան 1/1
«Ակբա Բանկ» ԲԲԸ
հ/հ 220023330511000
ՀՎ/ՀՀ 09104376
Տնօրեն Վ. Կոստանյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված
«31» մարտի 2021թ. կնքված
<<ՎՀ-ՄԱ-ԱՊՁԲ-21/03/03>> ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի						
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Միջ. Ծածկագ. (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ եռամսյակների, այդ թվում**			
			2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ	Ընդամենը
1	39224331	դույլ պլաստմասե	10875	21750	21750	21750
2	39224332	դույլ ցինկապատ	6125	12250	12250	12250
3	39224341	աղբարկղ, պլաստմասե	10875	21750	21750	21750
4	39839100	զոգաթիակ, աղբը հավաքելու համար ձողով	8000	16000	16000	16000
5	39839200	զոգաթիակ աղբը հավաքելու համար, հասարակ	5000	10000	10000	10000
6	39836000	ավել սովորական	15000	30000	30000	30000
7	39221410	ավել բակային	4000	8000	8000	8000
8	39835000	հատակ մաքրելու ձող	7300	14600	14600	14600
9	44411500	ջրի փական բրոնզե 1/2	4350	8700	8700	8700
10	44411500	ջրի փական բրոնզե 3/4	4650	9300	9300	9300
11	31521200	լամպ՝ էկոնոմ 15 վտ, 80 մմ, E27, 220 Վ	12350	24700	24700	24700

12	31521300	Լամպ գնդաձև շիկացման թելիկով	1950	3900	3900	3900
13	31531100	լամպ ԼԵԴ	15000	30000	30000	30000
14	31221180	·լամպերի կոթառներ	3000	6000	6000	6000
15	31211180	վթրային ավտոմատ անջատիչ միաֆազ	10000	20000	20000	20000
16	44423600	կպչուն ժապավեն	1900	3800	3800	3800
17	31684400	վարդակ	4500	9000	9000	9000
18	44411110	ջրի ծորակ մեկ փականով	12375	24750	24750	24750
19	44411742	զուգարանակոնքի մեխանիզմ	3800	7600	7600	7600
20	44411760	զուգարանի թղթի բռնակ	1500	3000	3000	3000
21	44511700	հարթաշուրթ	4500	9000	9000	9000
22	44511250	սեղմիչ աքցան	2500	5000	5000	5000
23	44511370	գործիքների հավաքածու	7250	14500	14500	14500
24	44521121	դռան փականի միջուկ	10000	20000	20000	20000
25	39221420/1	խոզանակ հատակի ձողով	1900	3800	3800	3800
26	39221420/2	խոզանակ հատակի սովորական	1000	2000	2000	2000
27	44511110/1	բահ սուր	2400	4800	4800	4800
28	44511110/2	բահ զոգավոր	2400	4800	4800	4800
29	44511330	պտուտակահան	1500	3000	3000	3000
30	44423220	աստիճան ծալվող	7250	14500	14500	14500

31	44511170	փոցխ այգեգործական	3000	6000	6000	6000
32	44511390	բահի բռնակ (պոչ)	3500	7000	7000	7000
33	18141100	աշխատանքային ձեռնոցներ	5250	10500	10500	10500

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ԳՆՈՐԴ

Վայքի համայնքապետարան
Բանկը՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչ.
Հ/Հ 900342121028
ՀՎՀՀ 08913477
Համայնքի ղեկավար
Թ. Ավետյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

<<Արման և Վահե Կոստանյաններ>> ՍՊԸ
ՀՀ ՎՁՄ ք. Վայք Շահումյան 1/1
«Ակբա Բանկ» ԲԲԸ
h/h 220023330511000
ՀՎ/ՀՀ 09104376
Տնօրեն Վ. Կոստանյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
«31» մարտի 2021թ. *կնքված*
<<ՎՀ-ՄԱ-ԱՊՁԲ-21/03/03>> ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ_____
հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների						Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1
«31» մարտի 2021թ. *կնքված*
<<ՎՀ-ՄԱ-ԱՊՁԲ-21/03/03>> ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ: